

---

---

**ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ**

---

**ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ**

---

**HISTORY OF THE ANCIENT AND MIDDLE AGES**

---

## ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՍԻԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

### ՄԱՐԻԱՄ ԽԱՆՉԱԴՅԱՆ

**Բանալի բառեր՝** մարքսիզմ, արտադրության ասիական եղանակ, օրիենտալիզմ, արևելյան դեսպոտիզմ, պետության ծագում, խորհրդային գաղափարախոսություն:

«Արտադրության ասիական եղանակին» (այսուհետև՝ ԱԱԵ) մեր անդրադարձի պատճառն այդ կոնցեպտի՝ վաղ պետականությունների տեսական ուսումնասիրման կարևոր փուլ լինելն է: Այն քննարկել են ամբողջ XX դ. ընթացքում թե՛ խորհրդային, թե՛ արևմտյան պատմաբանները և սոցիոլոգները: Նրա որոշ դրույթներ Կարլ Վիտֆոգելի «հիդրավլիկ տեսության»<sup>1</sup> հիմքն են եղել, ինչպես նաև 1960-1990-ական թթ. ԱԱԵ քննարկումը «օդանցքի» պես մի բան դարձավ գաղափարախոսական աքցաններով սեղմված խորհրդային պատմաբանների համար, և այդ քննարկումները մեծապես նպաստեցին խորհրդային տեսական պատմագիտության զարգացմանը:

Այդ իսկ պատճառով վաղ պետականությունների տեսական հարցերն ուսումնասիրելիս անհրաժեշտ է անդրադառնալ ԱԱԵ տեսությանը՝ առանձնացնելով այն վոլգար մարքսիզմի կարծրացած տեսակետներից: Գրականության ահոելի ծավալի պատճառով անհնար է հանգամանորեն

---

<sup>1</sup> Կ. Վիտֆոգելը (1886-1998 թթ.) գերմանական և ամերիկյան շինագետ էր, սոցիոլոգ և պատմաբան, մարքսիստական հայեցակարգի հետևորդ: Իր գլխավոր աշխատության՝ «Oriental despotism. A comparative study of total power» (1957 թ.) մեջ նա առաջ է քաշում հիդրավլիկ պետությունների տեսությունը, որի համաձայն ոչեվրոպական հասարակարգերի հետամսացությունն ու դեսպոտիզմը բացատրվում են ոռոգովի երկրագործության համար անհրաժեշտ սոցիալական կառուցների ազդեցությամբ:

քննարկել այս հարցը մեկ հոդվածի շրջանակներում, սակայն մենք կփորձենք առանձնացնել ԱԱԵ կոնցեպտի այն դրույթները, որոնք կարևոր են վաղ պետականությունների ուսումնասիրման հարցում:

Արևելք-Արևմուտք դիխոտոմիան (Երկատումը) հազարամյակների պատմություն ունի և քաղաքագիտական մտքում իր տեղն է գրավել դեռ Արխատոտելի «Պոլիտիկայից». «*Տեղին է հույներին իշխել բարբարոսների վրա. բարբարոս և սպրուկ հասկացություններն իրենց բնույթով նույնն են*»<sup>2</sup>: Եվ, չնայած այս արտահայտությունն անհրաժեշտ է դիտարկել իր համատեքստում և Արխատոտելի բազմաթիվ վերապահումները հաշվի առնելով<sup>3</sup>, այնուամենայնիվ այս միտումն իր հաստատուն տեղը գտավ նախ անտիկ աշխարհատեսության մեջ, իսկ հետագա դարաշրջաններում արևամտյան հասարակության ներսում ծավալված համակարգային փոփոխություններն էլ ավելի խիստ տարանջատում մտցրեցին դինամիկ զարգացող Արևմուտքի և «քընկոտ»<sup>4</sup> Արևելքի միջև: Զևավորվեց արևմտաեվրոպական օրիենտալիզմը, որի շրջանակներում եվրոպական և ասիական պետական կառուցվածքների տեսական համադրությունն ու հակադրությունը վերածվեց ավանդույթի՝ ազդված օսմանյան տերության՝ չափից դուրս մոտիկ լինելու հանգամանքով: Միս ու արյուն առնելով Վերածննդի շրջանի քաղաքական տեսության առաջացմանը զուգընթաց՝ այն քայլ առ քայլ հասավ XVII-XVIII դարերին, և օսմանյան տերությանը վերաբերող գաղափարներն ու պատկերացումները

<sup>2</sup> Аристотель 1983: кн. 1, 1:5.

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս Պոյանսկի 1994.

<sup>4</sup> «Золотая дремотная Азия» արտահայտությունը Ս. Եսենինի «Да! Теперь решено! Без возврата...» (1922 թ.) բանաստեղծության տողերից է: Էլ. Տարբերակը՝ <http://www.museum-esenin.ru/tvorchestvo/453>

տարածվեցին նաև Պարսկաստանի, Հնդկաստանի և Չինաստանի վրա<sup>5</sup>:

XVII-XVIII դդ. ճամփորդական նորերը (Պ. Ռիկո, Ժ.Բ. Տավերնյե, Ժ. Շարդեն և այլք) էլ ավելի նպաստեցին Արևելքի՝ Արևմուտքից խիստ տարբերվող քաղաքակրթական միջավայր լինելու տեսակետի ամրապնդմանը: Հրապարակում հայտնվեց «**արևելյան դեսպոտիզմ**»<sup>6</sup> ձևակերպումը, ինչն էլ դարձավ մուսուլմանական Արևելքի հիմնական բնորոշումը ֆրանսիական Լուսավորությունից սկսած<sup>7</sup>: Այդ միտումն է տեղ գտնում Շարլ Լուի Մոնթեսըյոյի աշխատություններում<sup>8</sup>, ֆիզիոկրատների դպրոցի հիմնադիր ֆրանսիացի տնտեսագետ Ֆրանտուա Կենեի «Le Despotisme de la Chine» աշխատությունում<sup>9</sup>, պատմական դինամիկայի առաջին տեսաբան Գ. Հեգելի պատմության փիլիսոփայության մեջ («**Արևելյան պատմության մանկությունն է**»<sup>10</sup>) և արևմտաեվրոպական

<sup>5</sup> **Андерсон П.** 2010: 424-425.

<sup>6</sup> Արևելքում դեսպոտիկ կառավարման մասին միտքը նոր ժամանակներում ի հայտ է գալիս ֆրանսիացի փիլիսոփա Ժան Բոդեսի (1530-1596թթ.) աշխատություններում. «Ազգնապես բոլոր պետությունները բռնությամբ ու նվաճումներով են սրեղծվել: Անարդար պատերազմների արդյունքում ի հայտ են եկել բերունական պետություններ, որպես միապետը զենքի ուժով յուրացրեց գույքը և սրբեց մարդկանց: Նա կառավարում է իր հայակակներին ինչպես հայրը ընդանիքին: Ահա այդպիսին են Արևելքի միապետությունները»: Տե՛ս **Мухаев** 2016. Էլ-տարբերակը [https://studme.org/56782/politekonomiya/teoriya\\_gosudarstvennogo\\_suvereniteta\\_zhana\\_bodena](https://studme.org/56782/politekonomiya/teoriya_gosudarstvennogo_suvereniteta_zhana_bodena)

<sup>7</sup> **Мигаль** 2015: 154; **Годелье** 2007: 3-4; **Шубина** 2011: 208.

<sup>8</sup> **Монтескье** 1955: 23, 30-32, 36-37.

<sup>9</sup> Վերջերս արտահայտվել է տեսակետ, որ «չինական դեսպոտիզմ» արտահայտությունը Ֆ. Կենեի համար հնարավորություն էր տվյալ ժամանակի ֆրանսիական միապետական համակարգը ներկայացնելու համար, տե՛ս **Кондакова** 2014.

<sup>10</sup> **Гегель** 1993: 147-149 «Всемирная история направляется с Востока на Запад, так как Европа есть безусловно конец всемирной истории, а Азия ее начало... Это - детский возраст истории». Тե՛ս նաև **Гобозов** 2017: 12.

բազմաթիվ այլ պատմաբանների, սոցիոլոգների ու փիլիսոփանների աշխատություններում<sup>11</sup>:

Արևելքի տարբերվող հասարակական և տնտեսական զարգացմանը 1853 թվականին «New-York Herald Tribune» ամսագրում անդրադառնում է Կ. Մարքսը: «*The British Rule in India*» հոդվածում<sup>12</sup> նա քննարկում է արևելյան հասարակություններին բնորոշ «դեսպոտիզմը»՝ պայմանավորելով դա կլիմայական առանձնահատկություններով, աշխարհագրական միջավայրով ու արհեստական ռոռոգման ցանց ստեղծելու և զանգվածային հասարակական աշխատանքներով պահպանելու անհրաժեշտությամբ: Այդ կացութաձևն, ըստ Կ. Մարքսի, գոյություն է ունեցել անհիշելի ժամանակներից և էական որևէ փոփոխման չի ենթարկվել:

1859 թ. Կ. Մարքսն իր «Քաղաքական տնտեսագիտության քննադատությունը» աշխատությունում տախս է հետևյալ ծևակերպումը. «Ընդհանուր առմամբ՝ արտադրության **ասիսական**, անտիկ, ֆեռալական և ժամանակակից բուժությական եղանակները կարող են դիտարկվել որպես հասարակության տնտեսական ծևավորման **պրոգրեսիվ** փուլեր»<sup>13</sup>: Առավել հանգամանորեն ԱԱԵ կոնցեպտին Կ. Մարքսն անդրադառնում է իր «Արտադրության կապիտալիստական եղանակին նախորդող ծևերը» աշխատության<sup>14</sup> մեջ և բազմաթիվ նամակներում<sup>15</sup>, որոնցում քննարկում է Լյուիս Մորգանի և այլ ազգագրագետների աշխատություն-

<sup>11</sup> **Վասիլьев** 1982: 60; 1997: 93.

<sup>12</sup> Տե՛ս Էլ. տարբերակը անգլերեն՝

<https://www.marxists.org/archive/marx/works/1853/06/25.htm>, ոռուերեն՝

<http://lugovoy-k.narod.ru/marx/09/22.htm>:

<sup>13</sup> **Маркс** 1949: 8.

<sup>14</sup> **Маркс** 1980: 267-270.

<sup>15</sup> **Milos** 1997: 5.

ները, Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի ագրարային հարցերը<sup>16</sup>:

ԱԱԵ կոնցեպտը Կ. Մարքսը դիտարկում է իր արտադրության եղանակների տեսության հիմքի վրա: «Արտադրության եղանակի կոնցեպտը Կ. Մարքսի տեսության առանցքային կոնցեպտն է, կոնցեպտ, որը ձևավորվում է՝ սկսած «Գերմանական գաղափարախոսությունից» (1846 թ.): Արտադրության «եղանակը»՝ դա մատերիալիստական «կարգի» («maniere») և սոցիալական «կարգի» («maniere») համակցությունն է»<sup>17</sup>: Մատերիալիստական կարգն իր մեջ է ամփոփում հասարակությունը որոշակի դարաշրջանում բնորոշող նյութական և ինտելեկտուալ արտադրողական ուժերը: Սոցիալական կարգը հարաբերությունների ամբողջությունն է, որով մարդիկ ներազդում են բնության վրա՝ իրենց գոյության նյութական պայմաններն արտադրելու և բաշխելու համար: Այս հարաբերություններն է Կ. Մարքսն անվանում հասարակական արտադրական հարաբերություններ, որոնք պատմականորեն հաջորդում են մեկը մյուսին՝ համապատասխանելով արտադրողական ուժերի որոշակի մակարդակներին, իսկ սոցիալական կազմավորումները («institutions») (ընտանիքի, կրոնի, կառավարման և այլնի ձևերը) իրենց հերթին համապատասխանում են արտադրության տարբեր ձևերին և նրանց հետ միասին կազմում են յուրահատուկ հասարակական ամբողջություններ, որոնք նա անվանում է հասարակական և տնտեսական ֆորմացիաներ<sup>18</sup>: Այլ կերպ ասած՝ արտադրությունը որոշակի հասարակական ձևում ոչ այլ ինչ է քան արտադրության որոշակի ձև (սորկատիրական, ավատատիրական և այլն)<sup>19</sup>:

<sup>16</sup> Տեր-Ակոպյան 1973: 217; Գուգարեան 2007: 5.

<sup>17</sup> Գուգարեան 2007: 4.

<sup>18</sup> Նույն տեղում, 3:

<sup>19</sup> Սեմենով 2003: 2.4.2 էլ. տարբ. [https://scepsis.net/library/id\\_1079.html](https://scepsis.net/library/id_1079.html)

ԱԱԵ հիմքում, ըստ Կ. Մարքսի, արևելյան համայնքն է և **համայնական հողային սեփականությունը**: «Հողն է այն մեծ լաբորավորիան, զինանոցը, որն ապահովում է և՝ աշխատանքի միջոցներով, և՝ աշխատանքի նյութով, և՝ կացարանով, այսինքն՝ կոլեկտիվի բազիսն է»<sup>20</sup>: Այս համայնական հողի սեփականությունը («**սեփականության ասիական ձևը**») Կ. Մարքսը համարում է **ի սկզբանե**, բնական ճանապարհով ձևավորված համայնքերին (տոհմերի վերածված ընտանիքներ կամ նմ.) հատուկ սեփականության ձև<sup>21</sup>: Մանր համայնքները միավորող ընդհանուր ուժը հանդես է գալիս որպես գերազույն սեփականատեր կամ միակ սեփականատեր, որպես հայր, որը տրամադրում է հողակտորն առանձին մարդուն այն համայնքի միջոցով, որին այդ մարդը պատկանում է: Որպես միավորող ընդհանուր ուժ կարող է հանդես գալ ամենազդեցիկ ընտանիքի հայրը, կամ էլ այդ դերը կարող են ստանձնել մի քանի ընտանիքների գլխավորները: Ըստ այդմ այդ հասարակության ձևը կլինի կամ ավելի դեսպոտիկ, կամ ավելի դեմոկրատական<sup>22</sup>:

Դեսպոտիկ կառավարումն այս պարագայում ավելի բարձր սկզբունք է, և ընդհանուր միջավայրը, ասիական ժողովուրդների տնտեսության մեջ մեծ նշանակություն ունեցող ջրանցքները, կապի միջոցները և այլն հենց այդ կառավարման արդյունքն են, իսկ քաղաքներն այս դեպքում առաջանում են կամ արտաքին առևտության համար բարենպաստ վայրերում, կամ էլ այն վայրերում, որտեղ պետության դեկավարը և իր պաշտոնյաներն օգտագործում էին իրենց եկամուտը (հավելյալ արդյունքը՝ համայնականների աշխատանքը փոխհատուցելու համար)<sup>23</sup>:

<sup>20</sup> **Маркс** 1980: 468.

<sup>21</sup> **Նույն տեղում**, 467:

<sup>22</sup> **Նույն տեղում**, 470:

<sup>23</sup> **Նույն տեղում**:

Փորձենք ի մի բերել մարքսյան ԱԱԵ կոնցեպտի հիմնական դրույթները.

1. Դա պատմության վաղնջագույն շրջանից գոյություն ունեցող համայնքն է, և «ասիական» ծևակերպումն այստեղ պայմանական բնույթ է կրում. այդպիսին են եղել ի սկզբանե բոլոր մայրցամաքներում ծևավորված համայնքները<sup>24</sup>: Կ. Մարքսի համար այդքան էլ պարզ չէին հինարևեյան սոցիոպատմական օրգանիզմներում տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունները, բայց նա չէր կասկածում, որ դրանք նույնատիպ են և որակապես տարբերվում են թե՛ անտիկ, թե՛ ավատատիրական հարաբերություններից: Այդ իսկ պատճառով ասիական տնտեսական ֆորմացիան նա համարում է դասակարգային հասարակության առաջին պատմական ձևը<sup>25</sup>:

2. Պատմական տեսակետից այս առաջին համայնքներում Կ. Մարքսը չի բացառում իշխանության սակրալ բնույթը. «իրական յուրացումը աշխարհանքի պրոցեսի միջոցով կեղի է ունենում այնպիսի նախադրյալների արդյունքում, որոնք աշխարհանքի արդյունք չեն, բայց ընկալվում են որպես դրա բնական կամ **ասրվածային** նախադրյալներ»<sup>26</sup>:

3. ԱԱԵ պարագայում չկա մասնավոր սեփականություն, այլ կա հողի համայնական՝ պետական, իմա՝ թագավորական սեփականություն: Եվ հողն է արտադրության գլխավոր միջոցը:

4. ԱԱԵ-ն պայմանավորված է արևելյան քաղաքակրթությունների համար կենսական նշանակություն ունեցող ոռոգման ցանցեր ստեղծելու և պահպանելու անհրաժեշտությամբ:

5. Կ. Մարքսը գտնում է, որ ասիական հասարակու-

<sup>24</sup> Հարսանց 1966: 87; Տեր-Ակոպյան 1973: 168.

<sup>25</sup> Семенов 2003: 2.4.3. Էլ. տարբերակը [https://scepsis.net/library/id\\_1079.html](https://scepsis.net/library/id_1079.html)

<sup>26</sup> Մարքս 1980: 468.

թյուններում պետությունը և՝ հողատերն է, և՝ սուվերենը, և այս դեպքում *հարկն ու ռենգան համընկնում են*, կամ, ավելի ճիշտ ասած՝ չկա հարկ, որը տարբերվի հողային ռենտայի այդ ձևից: Պետությունն է հողի գերագույն սեփականատերը, չկա մասնավոր սեփականություն, սակայն կա հողի ինչպես մասնավոր, այնպես էլ համայնական տիրապետում<sup>27</sup>: Այլ կերպ ասած՝ տիրող դասակարգը յուրացնում էր հավելյալ աշխատանքի արդյունքները, և այդ յուրացումը նման է բոլոր ագրարային կամ քաղաքային համայնքների կողմից պետությանը վճարվող հարկին<sup>28</sup>:

Հատկանշական է, որ 1850-ական թթ. հետո Կ. Մարքսն այլևս չի հիշատակում «արտադրության ասիական եղանակ»<sup>29</sup> արտահայտությունը<sup>30</sup>: Նա տվեց ընդամենը ուսումնասիրման աշխատանքային ուրվագիծը, սակայն չստեղծեց ավարտուն հայեցակարգ<sup>31</sup>, քանի որ նրա ուշադրության կենտրոնում առհասարակ կապիտալիստական արտադրության ձևերն էին<sup>32</sup>, և ըստ որոշ ուսումնասիրողների՝ Կ.

<sup>27</sup> **Маркс** 1962: 354.

<sup>28</sup> **Milos** 1999.

<sup>29</sup> Նշենք, սակայն, որ նրա աշխատություններում հանդիպում են «ասիական ֆորմացիա», «ասիական հասարակություն», «ասիական համայնք», «զյուղական համայնքների համակարգ» արտահայտությունները, որոնք երբեմն հանգեցնում են այդ հասկացությունների արտահամատեքստային նոյնականացմանը, տե՛ս **Даниленко** 2018: 42.

<sup>30</sup> Ըստ Ն. Տեր-Հակոբյանի՝ հետագա աշխատություններում ԱԱԵ ձևակերպման բացակայությունը պայմանավորված է նրանով, որ Կ. Մարքսը 1868 թ. արդեն ծանոթացել էր Գ. Մաուրերի աշխատանքներին, որոնցում գտել էր իր տեսության հաստատումը. «Հնարավոր է, որ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը հրաժարվել են եզրույթից՝ դրա աշխարհագրական բնույթից ենելով. ինչպես, օրինակ, նոյն կերպ հրաժարվել են «արտադրության անտիկ եղանակ» եզրույթից: Կամ կարելի է ենթադրել, որ ԱԱԵ եզրույթը օգտագործվում է միայն տնտեսագիտական երկերում»: Տե՛ս **Ter-Akopyan** 1973: 203, примечание №2.

<sup>31</sup> **Гаруашвили** 1966: 87.

<sup>32</sup> **Milos** 1997: 3.

Մարքսի կարծիքն այս հարցում մնաց անորոշ ու հակասական<sup>33</sup>:

Կ. Մարքսի մահից հետո Ֆ. Էնգելսը հրատարակեց երկու աշխատություն, որտեղ անդրադարձավ հասարակության պատմական ծևերին. «Անդի-Դյուրինգ» (1878 թ.) և «Ընդանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» (1884 թ.) ուսումնասիրությունները: «Անտի-Դյուրինգ»-ում կա ԱԱԵ կոնցեպտի դրույթներից մեկի հիշատակումը (դեսպոտիաների և արհեստական ռոռզման փոխկապակցվածության համատեքստում)<sup>34</sup>, սակայն երկրորդ աշխատությունում որևէ անդրադարձ այդ կոնցեպտին չկա: Այս հանգամանքը տեղիք է տվել կասկածելու, որ Ֆ. Էնգելսը հրաժարվել է այդ տեսակետից, սակայն Ն. Տեր-Հակոբյանը գտնում է, որ այդ աշխատությունում Ֆ. Էնգելսն առհասարակ իր առջև հասարակական ֆորմացիաները և արտադրության ծևերը քննարկելու նպատակ չի դրել<sup>35</sup>: Ե՛վ խորհրդային, և՝ արևմտյան տեսակետների հանգամանալից վերլուծությամբ այս հարցը քննարկված է Վ. Լինշայի 1995թ. լուս տեսած «Էնգելսի հանելուկը» հոդվածում<sup>36</sup>:

Ասիական եղանակի որոշ քննարկումներ և գուգահեռներ ուսուական հողագործական համայնքի հետ կարելի է գտնել Ա. Գերցենի<sup>37</sup> և Գ. Պլեխանովի մոտ: Վերջինս գտնում էր, որ ի տարբերություն արևմտավրոպականի՝ ուսուական գյուղական համայնքն է ուս գյուղացու և հողի փոխ-

<sup>33</sup> Sofri 1969: 15; Васильев 1997: 94.

<sup>34</sup> Энгельс 1931: 109. «Многочисленные деспотии, поднимавшиеся и падавшие в Персии и Индии, все отлично помнили свою первуюшую обязанность: заботиться об орошении долин, без которого в этих странах невозможно земледелие».

<sup>35</sup> Тер-Акопян 1973: 70, 168.

<sup>36</sup> Лынша 1995.

<sup>37</sup> Герцен 1858: III. Էլտարբերակը՝ <http://gertsen.lit-info.ru/gertsen/public/russie-vieux-monde/russie-vieux-monde-staryj-mir-i-rossiya.htm>

հարաբերությունների հիմքում, ինչի շնորհիվ հնարավոր է խուսափել կապիտալիզմից, և հողի կողեկտիվ տիրապետումը կարող է դառնալ սկզբնակետ սոցիալիստական սկզբունքներով տնտեսական կյանքի բոլոր կողմերը կազմակերպելու համար<sup>38</sup>:

Եթե մինչև 1917 թ. Հռկտեմբերյան հեղափոխությունը ԱԱԾ կոնցեպտի քննարկումը հիմնականում տեսական բնույթ էր կրում, ապա խորհրդային վարչակարգի հաստատման և հետագա գաղափարախոսական պայքարի պայմաններում այն անհարկի միտումնավորություն ձեռք բերեց: Կ. Մարքսի՝ ԱԱԾ կոնցեպտի վերջնական ամփոփ ձևակերպում չտալը, նրա հայացքների որոշակի փոփոխությունը 1850-ականներից հետո և Վ. Լենինի՝ ընդամենը երկու արտահայտությամբ այս խնդրին անդրադառնալը ստեղծեցին լայն դաշտ գաղափարական սպեկուլյացիաների և սուր քաղաքական պայքարի համար: «Argumentum ad verecundiam»-ը վերածվեց բանավեճի կարևոր դրույթի, և առաջին պլան մղվեցին սահմանափակող դեր ունեցող «հեղինակության վկայակոչումները»՝ դրական կամ բացասական իմաստով<sup>39</sup>: ԱԱԾ կոնցեպտը 1927 թվականին հայտնվեց բանավեճերի կիզակետում Չինաստանում հեղափոխության հետագա զարգացման քննարկումների համատեքստում: Կ. Ռադեկի՝ Կոմինտերնում արտահայտված տեսակետին<sup>40</sup> «Правда»

<sup>38</sup> **Плеханов** 1956: 133.

<sup>39</sup> Dunn 1982: 7-8. «1. **arguments from authority**, subdivisible into a) *positive arguments from positive authority* (Marx himself described the Asiatic mode of production as one of the progressive epochs in economic formation of society, and we are bound by what he said, b) *negative arguments from positive authority*, either direct (Lenin specifically rejected the asiatic mode of production, and we're bound by it regardless of what Marx said) and c) *negative arguments from negative authority* (Trotsky (or Bukharin or Kautsky or some other recognized deviationist) accepted the Asiatic mode of production; therefore we're bound to reject it; 2. **arguments from pure Marxist theory**; 3. **political arguments**)».

<sup>40</sup> Կ. Ռադեկը համարում էր, որ Չինաստանը 1927 թ. նախօրեին ավելի շուտ բոլոժուական բնույթ ուներ, քան թե ավատափական: Ավատա-

թերթի 1927թ. մայիսմեկյան համարում պատասխանեց Կոմինտերնում ԱՄՆ-ի կոմկուսի ներկայացուցիչ Զոն Պոպերը՝ Ռադեկի հայացքներին հակադրելով մարքսյան «արտադրության ասիական եղանակը»: Այս հոդվածն առաջացրեց բուռն բանավեճ<sup>41</sup> որի նպատակը մեկն էր. որոշել, թե ժամանակակից չինական հասարակությունը զարգացման ո՞ր փուլում է գտնվում և, համապատասխանաբար, նրա ո՞ր խավերն են օբյեկտիվորեն նպաստում հեղափոխությանը, իսկ որոնք՝ ոչ<sup>42</sup>: Գաղափարախոսական հրամայականները, մասնագետ-պատմաբանների սուր պակասը և քաղաքական նպատակահարմարությունը հանգեցրին նրան, որ ընդունված բնութագրումը դոկտրինալ երանգավորում ձեռք բերեց. նախահեղափախական Չինաստանը (տարածումով ամբողջ Արևելքի վրա) բնութագրվեց որպես դասակարգային ավատատիրական հասարակություն<sup>43</sup>:

1920-1930-ական թվականները ԱԱԵ կոնցեպտի վերաբերյալ բանավեճի առաջին փուլն էին<sup>44</sup>: Դրան գումարվեց ֆորմացիաների բանավեճը. 1933 թ. Վ. Ստրուվեն առաջ քաշեց Հին Արևելքի ստրկատիրական հայեցակարգը՝ փորձելով այն հիմնավորել Միջագետքի, Եգիպտոսի և Խեթական տերության աղբյուրներով<sup>45</sup>: Հինարևելյան հասարակությունները Վ. Ստրուվեն ներկայացրեց որպես ստրկատիրական՝ ստրուվներին դասելով նաև ոչ ստրուկ, բայց

---

տիրական նա համարում էր Չինաստանի հին շրջանը, մանրամասն տե՛ս **Никифоров** 1970: 208-209.

<sup>41</sup> **Никифоров** 1970: 209-211; **Тер-Акопян** 1973: 172.

<sup>42</sup> **Крих** 2015: 133.

<sup>43</sup> Նաև ընարկվող հարցերից էին՝ առհասարակ ԱԱԵ գոյությունը և ԱԱԵ-ն մարքսիզմի դասականների աշխատություններում: Մանրամասն տե՛ս **Никифоров** 1966: 10-13.

<sup>44</sup> **Годес** 1931.

<sup>45</sup> **Струве** 1934; **Формозов** 2006, ГАИМК как центр советской исторической мысли. Էլ.տարբերակը՝ <https://arheologija.ru/gaimk-kak-tsentr-sovetskoy-istoricheskoy-myсли-v-1932-1934-godah/>

շահագործվող լայն զանգվածներ, և ստեղծեց, այսպես կոչված, «пятичленка»-ն՝ իինդ սոցիալ-տնտեսական ֆորմացիաների (*նախնադարյան-համայնական, սորոկապիրական, ավագապիրական, կապիտալիստական, կոմունիստական*) հարացուցը: Արևելյան ու անտիկն այս սխեմայում միավորվեցին մեկ՝ սորոկատիրական ֆորմացիայի մեջ: Եվ եթե 1930-ականների սկզբում բանավեճեր դեռ ընթանում էին, ապա <Կ(բ)Կ պատմության համառոտ կուրսում իին աշխարհը որպես սորոկատիրական ֆորմացիա ներկայացնելուց հետո այլընտրանքային կարծիքներն առհասարակ դուրս հանվեցին գիտական քննարկման հարթությունից:<sup>46</sup> Նոյն ճակատագրին արժանացավ ԱԱԵ կոնցեպտը<sup>47</sup>:

Խնդիրը չսահմանափակվեց միայն Խորհրդային Միության սահմաններով: Երբ 1957 թ. Խորհրդային հասարակության բարեկամ համարվող Կ. Վիտֆոգելը խորհրդային հասարակությունը դասեց արևելյան դեսպոտիաների թվին, նրա հիմնարար աշխատությունը նույնպես ընկավ արգելքի տակ<sup>48</sup>:

Բանավեճի արգելքից հետո խորհրդային պատմաբաններն ու փիլիսոփաները գնացին հինարևելյան և անտիկ ֆորմացիաների միջև տարբերությունների մերժման ճանապարհով: Ավելին, ավատատիրության ծևավորումը որևէ կերպ չէր համապատասխանում Ֆ. Էնգելսի եզրահանգումներին, քանի որ Արևմտյան Հռոմեական կայսրության վերջին շրջափուլը արտադրողական ուժերի անկման շրջան էր, այլ ոչ թե վերելքի, և Ֆ. Էնգելսի դիպուկ բնորոշմամբ՝ ավատատիրությունը ստեղծեցին գերմանացիներն հենց այն պատճառով, որ բարբարոս էին: Խորհրդային պատմաբան-

<sup>46</sup> Неронова 1992: 111.

<sup>47</sup> Ким 2001. Էլ.տարբերակը՝ <http://cheloveknauka.com/problema-aziatskogo-sposoba-proizvodstva-v-sovetskoy-istoriografii-20-e-gg-nachalo-90-h-gg>

<sup>48</sup> Качановский 1971:6; Галеев 2011: 156.

Ները փորձեցին այս անհամապատախանությունները բացատրել նոր սխեմայով, ըստ որի նախնադարյան հասարակարգը կարող է զարգացման երեք իրավահավասար ճյուղեր տալ՝ ասիական, անտիկ և ավատատիրական, և երեքն էլ ոչ թե ինքնուրուց ու հաջորդաբար փոփոխվող ֆորմացիաներ են, այլ միևնույն, իմա՝ երկրորդական ֆորմացիայի իրավահավասար վերափոխություններ<sup>49</sup>:

ԱԱԵ կոնցեպտի բանավեճի երկրորդ փուլը (1960-ական թթ.) անհնար կլիներ առանց «Ճնհալի»: Այս փոփում առանցքային թեման ԱԱԵ՝ ֆորմացիաների հարացուցում տեղի ճշգրտումն էր. արդյո՞ք ԱԱԵ-ն պետք է տեղադրել առաջնային (նախադասակարգային) ֆորմացիայի և երկրորդական (դասակարգային) փոփի միջև որպես միջանկյալ փուլ, որից սոցիոպատմական էվոլյուցիան շարժվում է դեպի ստրկատիրություն, ստրկատիրությունից էլ դեպի ավատատիրություն, թե՛ ԱԱԵ-ն պետք է համարել ինքնուրուց երևոյթ, որը զուգահեռաբար գոյություն ունի ստրկատիրության և ավատատիրության հետ մեկտեղ: ԱԱԵ կողմնակիցների մեծ մասը պաշտպանում էր առաջին տարբերակը<sup>50</sup>:

Բանավեճին մասնակցեցին նաև ֆրանսիացի մարքսիստներ Մ. Գոդեյեն և Ժ. Սյուլե-Կանալը: Երկուսն էլ գտնում էին, որ պատմությանը հայտնի հասարակությունների մեծամասնությունում առկա է արտադրության ասիական եղանակը որպես միջանկյալ փուլ, և այդ միջանկյալ փոփում շահագործման երկու հիմնական տեսակները (ստրկատիրական և ավատատիրական) գոյություն ունեին զուգահեռաբար<sup>51</sup>: Մ. Գոդեյեն ԱԱԵ-ն համարում էր վերջին

<sup>49</sup> Семенов, Философия истории 2.4.8. Էլ.տարբերակը՝ [https://scepsis.net/library/id\\_1079.html](https://scepsis.net/library/id_1079.html), Семенов 1998: 215-217.

<sup>50</sup> Васильев, Стучевский 1966: 86.

<sup>51</sup> Նույն տեղում:

ոչ դասակարգային և միևնույն ժամանակ առաջին դասակարգային հասարակարգը<sup>52</sup>: Նախնադարյան-համայնական կարգերի քայլայման պարագայում առաջանում են դասակարգային հակասությունների երկու ճյուղեր, և հետագա ընթացքն արդյունքում հանգեցնում է նրանցից մեկի (ստրկատիրականի կամ ավատատիրականի) հաղթանակին<sup>53</sup>:

1960-ական թթ. ԱԱԵ բանավեճերի մյուս թեմաներն էին. ԱԱԵ կոնցեպտի մարքսյան տեսակետների քննարկումը<sup>54</sup>, հողագործական համայնքի և հինարևելյան դեսպոտիայի՝ ԱԱԵ, ավատատիրության և ստրկատիրության պայմաններում գործարկման հարցերը, Հին Արևելքում սեփականության բնույթի, ԱԱԵ կայացման մեջ աշխարհագրական գործոնի դերի, ԱԱԵ ֆորմացիայի՝ ստրկատիրական ֆորմացիային նույնացնելու սխալականությունը<sup>55</sup>, հինարևելյան կարգերի, այսպես կոչված, «լճացումը»<sup>56</sup> և այլն: Բանավեճի արդյունքում 1966 թվականին լուս տեսավ «Однород и особенное в историческом развитии стран Востока» ժողովածուն՝ երեք տասնյակից ավելի հոդվածներով<sup>57</sup>:

Ցավոք, 1960-ականների վերջում ԱԱԵ կոնցեպտի մասին բանավեճը նույնպես արհեստականորեն դադարեցվեց, և նույնիսկ պաշտոնական տեսակետի դեմ հանդես եկողների հասցեին սպառնալիքներ հնչեցին<sup>58</sup>: Նոր թափ այս բանավեճը խորհրդային պատմագիտության մեջ սկսեց հավաքել 1970-ականների վերջերից՝ դառնալով խորհրդային արևելագիտության առավել ազդեցիկ ուղղություններից:

<sup>52</sup> Годелье 1965: 102.

<sup>53</sup> Васильев, Стучевский 1966: 87.

<sup>54</sup> Варга 1965.

<sup>55</sup> Гаруашянц 1966: 88.

<sup>56</sup> Тер-Акопян 1973: 167.

<sup>57</sup> Ким (отв.ред.) 1966.

<sup>58</sup> Семенов 2003: 2.4.11.

մեկը<sup>59</sup>, իսկ ԽՍՀՄ փլուզումը վերջնականապես վերացրեց գաղափարախոսական բոլոր արգելքներն այս հարցում:

1980-2000-ական թվականների գիտական բանավեճում (ցավոք, չենք կարող մեզ թույլ տալ ներկայացնել տեսակետների մեծ մասը, այդ իսկ պատճառով կսահմանափակվենք առավել կարևոր կարծիքներով) կարևոր ներդրում ունեցան Յու. Սեմյոնովը, Լ. Վասիլյանը, Լ. Ալանը, Ա. Կորոտակը:

Առաջին հերթին պետք է նշել «ձնհալի» ժամանակաշրջանի բանավեճերի ակտիվ մասնակից Յու. Սեմյոնովի մեծ ավանդը ԱԱԵ կոնցեպտի զարգացման հարցում: Նա դեռևս խորհրդային տարիներին առաջարկեց ԱԱԵ-ն վերանվանել «արդադրության պոլիտար եղանակ»՝ շեշտադրելով այս եղանակի համար առանցքային համադասակարգային մասնավոր սեփականությունը: Եվ քանի որ տիրող դասակարգը համընկնում է պետական ապարատի կորիզի հետ, ապա ճիշտ կլինի այն անվանել ոչ թե ասիական (Յու. Սեմյոնովը նշում է, որ այն գերակայող է եղել ոչ միայն Ասիայում, այլև վաղ Եվրոպայում, Աֆրիկայում, նախակոլումբույան Ամերիկայում), այլ արտադրության **պոլիտար եղանակ** (հուն. πολιτεία՝ պետություն բառից) կամ **պոլիտարիզմ**<sup>60</sup>: Իր հետագա աշխատանքներում էլ Յու. Սեմյոնովը շարունակեց պաշտպանել պատմության մարքսյան՝ մատերիալիստական ընկալումը, գտնելով, որ նույնիսկ Կ. Մարքսի այս կամ այն գաղափարի անճշտությունը չի ազդում պատմության մատերիալիստական հայեցակարգի կորիզի վրա<sup>61</sup>:

Լ. Վասիլյանը, ընդգծելով Արևելքի վաղ պետականությունների առաջացման առանձնահատկությունները՝ առաջարկեց ԱԱԵ կոնցեպտը փոխարինել «**արդադրության պե-**

<sup>59</sup> Коротаев 1995: 77 (примечание 1).

<sup>60</sup> Семенов 2019: 302.

<sup>61</sup> Семенов 1998: 195.

**դական եղանակ»<sup>62</sup>** ձևակերպմամբ: Քննարկելով Արևելքում մասնավոր սեփականության բացակայության մարքայան թեզը, Լ. Վասիլիսը որպես արևելյան մոդելի **համակարգաստեղծ գործոն** առաջարկում է դիտարկել ունտա-հարկով արտահայտվող **ուղիսպրիբուցիան**<sup>63</sup>: Նման հարաբերությունների հետևանքն է Արևելի իրավական համակարգը իր իրապարակային-իրավական նորմերի (պублично-правовые нормы) գերակայությամբ և մասնավոր սեփականատիրոջ ունեցվածքի պահպանման խիստ իրավական երաշ-խիքների բացակայությամբ, համակարգ, որը միտված է պետության շահերի պաշտպանությանը՝ պաշտոնյայի վերահսկող (և չարաշահող) գործառույթներով<sup>64</sup>: Արևելյան այս մոդելը նա անվանում է «**власть-собственность**»<sup>65</sup>: Չարունակելով իշխանության սակրալ բնույթի մասին մարքայան թեզը<sup>66</sup>: ԱԱԵ կոնցեպտը քննարկվում է նաև 1988 թ. լուս տեսած «Что такое азиатский способ производства» հոդվածում<sup>67</sup>, և արդեն իր «История Востока» երկիատորյակում նա, դրական գնահատելով մարքայան ԱԱԵ կոնցեպտը և գտնելով, որ Կ. Մարքսը ճիշտ է ընկալել դասական արևել-

<sup>62</sup> **Васильев** 1982: 60.

<sup>63</sup> **Նույն տեղում**, 90:

<sup>64</sup> **Նույն տեղում**, 94:

<sup>65</sup> **Васильев** 2007: 306.

<sup>66</sup> **Նույն տեղում**: «Сакральный лидер протогосударства оказывается центром политической и экономической структуры, которая не знакома еще с частной собственностью. В силу этого на плечи власти ложится не столько право, сколько обязанность взять на себя руководство усложняющимся хозяйством большого и имеющего тенденцию к разрастанию и усложнению коллектива. Все имущество и все хозяйство протогосударства обретает в силу этого (как и в силу традиционного права руководителя земледельческого коллектива на редистрибуцию его ресурсов) облик собственности правителя. Возникает феномен власти-собственности, высшая власть рождает верховную собственность носителя этой власти с его аппаратом администрации».

<sup>67</sup> **Васильев** 1988. Էլ.տարբերակ՝ <http://ignorik.ru/docs/vasileev-l-s-chto-takoe-aziatskij-sposob-proizvodstva-naro.html>

յան կառուցվածքի հիմնական գծերը<sup>68</sup>, առանձնացնում է մագիստրալ զարգացման երկու ուղիներ, որոնց առանցքային տարբերությունը մասնավոր սեփականության հարցն է. **առաջինը՝** հնագույնը (ex Oriente Iux)՝ արևելյանն է իր վաղնջագույն քաղաքակրթական-ուրբանիստական հզոր ներդրումով և պետության մակրոստրուկտորան կանխորշող համայնքով<sup>69</sup>, **երկրորդը՝** արևմտյանը իր «անտիկ շրջան - ավատադիրություն - կապիտալիզմ» (ընդ որում L. Վասիլկը համարում է, որ կապիտալիզմը անտիկ շրջանի էվոլյուցիայի պոտենցիան է) շղթայով. «Եթե մի կառուցվածքը հանգեցնում է կապիտալիստական հարաբերությունների՝ նրանում գոյություն ունեցող էվոլյուցիայի պոտենցիաների շնորհիվ, իսկ մյուալ՝ տարբերվողը, նույն հանգամանքների (այլ պոտենցիաների) բերումով կապիտալիզմի հանգեցնել չի կարող, ապա այս ամենն առաջացնում է ոչ միայն կառուցվածքների և զարգացման ուղիների տարբերություն, այլ հենց վերը նշված դիխոտոմիան։ Այլ կերպ ասած՝ Արևելք-Արևմուտք հակադրությունը բարձրանում է սիմվոլի մակարդակի»<sup>70</sup>:

L. Ալաևը<sup>71</sup> եզրահանգում է, որ մեկ ֆորմացիայի պատկանող հասարակությունների շղթայում դասական ավատատիրության ձևավորումը Արևմտյան Եվրոպայում հնարավոր դարձավ այն պատճառով, որ արևմտաեվրոպական հասարակությունն ի տարբերություն արևելյանի, ներքին «շեղում» ուներ, այսինքն՝ այդպես էլ չկարողացավ մինչև վերջ հաղթահարել անտիկ հարաբերությունների, մասնավորապես հոռմեական իրավունքի ժառանգությունը<sup>72</sup>:

<sup>68</sup> **Васильев** 2005: 29.

<sup>69</sup> **Նոյն տեղում**, 13:

<sup>70</sup> **Նոյն տեղում**, 16-17:Տե՛ս նաև **Годелье** 2007: 12-13.

<sup>71</sup> **Алаев** 1987; **Алаев** 1990.

<sup>72</sup> **Алаев** 1987: 78.

Ա. Կորոտակը վերապահությամբ է մոտենում Արևելք-Արևմուտք կտրուկ հակադրությանը և զարգացման անտիկ մոդելը որպես «մուտացիա» և պատահականություն ներկայացնելուն՝ համարելով, որ սոցիալ-քաղաքական էվոլյուցիայի միագիծ մոդելները (թե՛ հետխորհրդային, թե՛ արևմբռտյան) չեն կարող սպառիչ կերպով արտացոլել վաղ պոլիտիկաների ամբողջ սպեկտրը<sup>73</sup>: Հետագայում Ա. Կորոտակի՝ աշխարհագրական առանձնահատուկ պայմաններում ապրող հանրույթների սոցիալական էվոլյուցիայի առանձնահատկությունների վերհանման միտումը կշարունակեն Ն. Կրադինը և Ա. Խազանովը՝ դիտարկելով քոչվորական կազմավորումները որպես վաղ պետականության ձևեր<sup>74</sup>: Ա. Կորոտակը ԱԱԵ կոնցեպտը համարում է արհեստական և աննշան մոդիֆիկացիա մարքսյան հիմնական միագիծ հայեցակարգի (նախնադարից դեպի կոմունիզմ) շրջանակներում<sup>75</sup>:

ԱԱԵ կոնցեպտի քննարկումը տեղ է գտել նաև Վ. Իյուշեցինի (ֆորմացիաների նոր՝ քառանդամ տեսության հեղինակի)<sup>76</sup>, Ռ. Նուրեևի<sup>77</sup>, Ա. Տարասովի<sup>78</sup> և շատ ուրիշների աշխատություններում:

ԱԱԵ կոնցեպտի հետխորհրդային քննարկումները չսահմանափակվեցին ռուսաստանյան պատմագիտությամբ.

<sup>73</sup> **Коротаев** 1995: 78-79.

<sup>74</sup> **Хазанов** 2002; **Крадин** 2000.

<sup>75</sup> **Коротаев** 2003: 128.

<sup>76</sup> **Илюшечкин** 1986, 1996.

<sup>77</sup> **Нуреев** 1979, 1993.

<sup>78</sup> **Тарасов** 1996. Էլ.տարբերակը՝ [https://scepsis.net/library/id\\_102.html](https://scepsis.net/library/id_102.html): Ա. Տարասովը «ասիական» և «անտիկ» արտադրածները միավորում է մեկ ընդհանուր՝ «նախամեքենայական արտադրության» (домашинное производство) տարբերակելով միայն արտադրության միջոցների նկատմամբ սեփականության ձևերը, մասնավոր՝ Արևմուտքում, պետական (սակրալ կամ արքայական)՝ Արևելքում: Մարքսյան ԱԱԵ կոնցեպտը Տարասովը համարում է էտասիզմ:

XX դարի վերջին և XXI դարում ԱԱԵ կոնցեպտը քննարկվել է նաև բազմաթիվ արևմտյան պատմաբանների և սոցիոլոգների աշխատություններում<sup>79</sup>: Քննարկվող թեմաների շարքում են ԱԱԵ տեսական առանձնահատկությունները, մասնավորապես՝ ԱԱԵ կոնցեպտի հիմնարար կառուցվածքային առանձնահատկությունների և մարքսիզմի հետազոտական մեկնաբանությունների անհամապատասխանությունը<sup>80</sup>, նախակապիտայիստական հասարակարգերի սոցիալական և տնտեսական առանձնահատկությունները, վաղ հասարակությունների գյուղացիական բնակչության շահագործման ձևերը, ստրուկների կարգավիճակային հարցերը, ֆորմացիաների ներսում տեղի ունեցող որակական փոփոխությունները և այլն<sup>81</sup>:

Իր ուսումնասիրությունները շարունակեց նաև Մ. Գոդեյեն: 1980-ական թթ. հետո նրա հետաքրքրությունների կենտրոնում իշխանության առաջացման և ավանդական հասարակություններում ռեցիպրոկացիայի առանձնահատկությունների հարցերն էին<sup>82</sup>: Կ. Մարքսի իշխանության սակրալ բնույթի մասին նկատառումը Մ. Գոդեյեն բացատրում է հետևյալ կերպ. իշխանությունն ու շահագործումը նախկինում դասակարգեր չունեցող հասարակություններում առաջացել են աստիճանաբար և ընկալվել են որպես պարգև այն ծառայությունների համար, որոնք կառավարող անհատները իրականացրել են, ինչպես նաև ինչ-ինչ գործողություններով ապահովել են տիեզերական կարգի և կյանքի վերարտադրության համար պատասխանատու անտեսանելի ուժերի բարեհաճությունը: Տիեզերական կարգի և

<sup>79</sup> Krader 1994, Varieties of Marxism (edited by Shlomo Avineri) 1977; Андерсон 2010; Treadgold 1987; Рокмоп 2011 և ուր., տե՛ս նաև հղում 81:

<sup>80</sup> Milios 1997: 9-13, տե՛ս նաև Milios 1999.

<sup>81</sup> Այդ իրատարակություններից կարելի է նշել Bhattacharyya 2013; Bailey 1981.

<sup>82</sup> Годелье 2007.

կյանքի վերարտադրման միջոցների հանդեպ մոնոպոլիան պետք է նախորդեր արտադրության տեսանելի միջոցների մոնոպոլիային: Այստեղից էլ բխում է ծիսական փուլի գերակայությունը<sup>83</sup>:

Երկրորդ աշխարհամարտից հետո վերանայվեց նաև արևամտաեվրոպական օրիենտալիզմը<sup>84</sup>, և նրա շատ դրսուրումներն այժմ ընկալվում են որպես ռասիստական և հնացած, մանավանդ իր գաղութարարական հենքի և «Արևելքը ապասությեկտիվացնելու» (Է. Սահիի բնորոշմամբ) համար: «Սպառված» կամ ստագնացիայի մեջ գտնվող Արևելքի բնորոշումն այժմ լոկ քմծիծաղ է առաջացնում<sup>85</sup>:

Այս տեսակետից կարևոր տեղ են գրավում մարքսյան ԱԱԵ՝ եվրոպական օրիենտալիզմի ծիրում քննարկող (և քննադատող, մանավանդ Հնդկաստանի պատմաբանների և սոցիոլոգների շրջանում) աշխատությունները, որոնցից նշենք Էդվարդ Սահիի «Orientalism - Western Conceptions of the Orient»<sup>86</sup> աշխատությունը: Է. Սահիդը գրում է, որ Կ. Մարքսի հոդվածի վերջում տեղ գտած Յ. Վ. Գյոթեի քառատողը՝ «Sollte diese Qual uns quälen Da sie unsere Lust vermehrt...» West-östlicher Divan<sup>87</sup> ստեղծագործությունից արդեն իսկ հուշում է, որ Կ. Մարքսը տեղի է տվել Արևելքի մասին տիրող ռոմանտիկ և մեսիանիկ տրամադրություններին, և նրա տեսական սոցիալ-տնտեսական հայացքներն ընկղմվել են այդ դասական կերպարի մեջ<sup>88</sup>: Հնդկաստանին անդրադարձել է

<sup>83</sup> Մեջբերումն ըստ **Саутхолл** 2000: 345-346 (բնօրինակը՝ **M. Godelier** 1982, La Production des Grands Hommes. Pouvoir et domination masculine chez les Baruya de Nouvelle- Guinée):

<sup>84</sup> **Sté'u Said** 2003; **Abdel Malek** 1981.

<sup>85</sup> **Маргарян** 2016: 12.

<sup>86</sup> **Said** 2003: 13-14, 155-156.

<sup>87</sup> Գյոթեի 1814-1819 թթ. «Արևամտա-արևելյան դիվան» պոեմների ժողովածուն, որը ստեղծվել էր XIV դ. պարսիկ բանաստեղծ Հաֆեզի պոեզիայի ազդեցությամբ:

<sup>88</sup> **Said** 2003: 154.

նաև Օ’Լարին իր աշխատության<sup>89</sup> մեջ՝ նշելով, որ Հնդկաստանի վերաբերյալ հատվածները ցիրուցան են և մշակված չեն, այդ իսկ պատճառով տեղիք են տալիս բազմաթիվ սխալ եզրահանգումների<sup>90</sup>: Նշենք նաև Գ. Սահայի «Marxism and the Orient: A Reading of Marx»<sup>91</sup> և Մ. Թավարաջի<sup>92</sup> հոդվածները, որոնցում ԱԱԵ կոնցեպտը քննարկված է իր համակարգային թերությունների, եվրոպակենտրոնության և Հընդկաստանի պատմագրության վրա ազդելու տեսակետից:

ԱԱԵ կոնցեպտը մանրամասն քննարկվել Ո. Դանի «The Fall and Rise of the Asiatic Mode of Production»<sup>93</sup> աշխատության մեջ, Պ. Անդերսոնը վերհանել է ԱԱԵ կոնցեպտի ծևավորման ակունքները և կոնցեպտի՝ Արևելքի տարաբնույթ քաղաքակրթական մողեններին համապատասխանելու հարցը<sup>94</sup>, Հ. Կլասենը գրել է, որ մարքսյան պարզից դեպի բարդը և էվոլյուցիայի միագիծ զարգացման դրույթը թերի է, հետևաբար անհրաժեշտ է ընդունել սոցիալական էվոլյուցիայի բազմագիծ բնույթը, քանի որ զարգացման ոչ բոլոր ուղիներն են հանգեցնում պետության<sup>95</sup>: Վաղ պետականությունների մարքսյան դիխոտոմիային վերապահումով է վերաբերվում նաև ամերիկան գիտնական Պ. Լոյդը: Ըստ արժանվույն գնահատելով խորհրդային պատմաբանների ավանդը սոցիալական էվոլյուցիայի ուսումնասիրման մեջ և «դասակարգ», «պետություն» և «արդադրության եղանակ» հասկացությունները համարելով հզոր վերլուծական գործիքներ, այդուհանդերձ նա գտնում է, որ նրանց կիրառումը

<sup>89</sup> O’Leary 1989: 82-151.

<sup>90</sup> Սոյս տեղում, 147:

<sup>91</sup> Sahay 2007: 9-23 կետերը. Էլ.տարբերակը՝

[https://www.researchgate.net/publication/263167816\\_Marxism\\_and\\_the\\_Orient\\_A\\_Reading\\_of\\_Marx](https://www.researchgate.net/publication/263167816_Marxism_and_the_Orient_A_Reading_of_Marx)

<sup>92</sup> Thavaraj 1984.

<sup>93</sup> Dunn 1982.

<sup>94</sup> Андерсон 2010: 424-509.

<sup>95</sup> Классен 2007: 374.

միշտ չէ, որ միանշանակ է, որ վաղ պետականության և «Երրորդ աշխարհի» ուսումնասիրությունները ի հայտ են բերում արտադրության մի քանի ծների զուգահեռ առկայություն, որոնք սերտորեն փոխկապակցված են մեկ հասարակական ֆորմացիայի շրջանակներում<sup>96</sup>:

Խորհրդային շրջանի հայագիտ գիտնականներից (Գ. Պապայան, Յու. Գարուչյանց, Ն. Տեր-Հակոբյան) բացի, հետխորհրդային շրջանում ԱԱԵ կոնցեպտին անդրադարձել է Վ. Պողոսյանը քաղաքական մատրիցների հայեցակարգի տեսանկյունից: ԱԱԵ նա համարում է բազմաթիվ դարերի ընթացքում ձևավորված կացութաձև, որը ձևավորել է եվրասիական էթնոսների մշակույթն ու ոգին: Նրանց մշակութային արքետիպերի գերակայող գծերն են էտատիզմն ու պատերնալիզմը: Հասարակության արժեքային համակարգում այդ ալգորիթմը արտացոլված է ուժեղ սոցիալական պետության՝ որպես բազային արժեքի առկայությամբ: Այդ պետության համակարգաստեղծ ֆունկցիոնալ առանձնահատկություններն են ուժեղ կառավարիչը, իշխանության կոշտ ուղղահայաց գիծը, հստակ աստիճանակարգությունը և գործադիր (ոչ թե օրենսդիր) իշխանության առաջնորդությունը)<sup>97</sup>:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուր ուսումնասիրություն կամ տեսակետ անհրաժեշտ է դիտարկել այն գաղափարախոսական-հասարակական պարադիգմում, որտեղ նա ստեղծվել է: ԱԱԵ կոնցեպտի զարգացումը Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատություններում կապված է XIX դարի երկրորդ կեսին կոնկրետ գիտությունների զարգացման հետ<sup>98</sup>, և այդ տեսակե-

<sup>96</sup> Լրյոդի տեսակետը ներկայացված է ըստ Կոչակովա 2007: 329-334:

<sup>97</sup> Պոգօսյան 2015, 37-41.

<sup>98</sup> Տեր-Ակոպյան 1973: 219.

տից Կ. Մարքսի հիմնական խնդիրը ոչ թե «ասիական հետամնացության» թեզն էր, այլ ոչ կապիտալիստական հասարակությունների՝ կապիտալիստականի վերածվելու պատճառների քննարկումը<sup>99</sup>: Կ. Մարքսը որևէ ենթադրություն չի արել ԱԱԵ-ին բնորոշ ստագնացիայի մասին, նա ընդամենն արձանագրել է էմպիրիկ փաստի տեսական բացատրությունը, այն, որ Ասիայի առանձին հատվածներ ցուցաբերում են սոցիալական էվոլյուցիայի տեսակետից անփոփոխ վիճակ<sup>100</sup>:

Ավելին, Կ. Մարքսը կարողացել է արևելյան դեսպոտիզմի հին հասկացությունը վերափոխել պետականաստեղծ գործընթացների յուրովի մեկնաբանության՝ բխեցնելով **պետությունը** հասարակության սեփականության, աշխատանքի և կազմակերպման համայնական ձևերի օրգագումից<sup>101</sup>:

Տասնամյակներ անց ԱԱԵ կոնցեպտն ընկավ խորհրդային գաղափարախոսական մեքենայի և քաղաքական կոնյունկտուրայի մամլիչի տակ, և շատ հարցերում ինքը՝ Կ. Մարքսը անընդունելի դարձավ մարքսիստների համար<sup>102</sup>: Եվ չնայած ԱԱԵ կոնցեպտը խորհրդային պատմագրության մեջ թողեց այլևս չկիրառվող կլիշեներ (պարտադիր ստրկատիրական ֆորմացիա, պետության առաջացման միագիծ տարբերակ, արևելյան դեսպոտիա և այլն<sup>103</sup>), այնուամենայնիվ ԱԱԵ կոնցեպտին նվիրված բանավեճերը (մանավանդ 1960-ական թթ. հետո) իրենց կարևոր ներդրումն ունեցան վաղ հասարակությունների սոցիալ-տնտեսական հարցերի ուսումնասիրման մեջ՝ ապահովելով այս կոնցեպտի ուրույն տեղը առհասարակ պատմության փիլիսոփայության մեջ:

<sup>99</sup> **Milios** 1997: 5.

<sup>100</sup> **Նոյն տեղում**, 9:

<sup>101</sup> **Годље** 2007: 12.

<sup>102</sup> **Рокмоп** 2011: 56.

<sup>103</sup> **Даниленко** 2018: 46.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Алаев Л.** 1987, Формационные черты феодализма и восток, Народы Азии и Африки, № 3, с. 78-90. Ել.տարբերակը՝ <http://ignorik.ru/docs/l-b-alaev-formacionnie-cherti-feodalizma-i-vostok-narodi-a.html> (մուտքի օր՝ 29.10.2019):
- Алаев Л., Ерасов Б.** 1990, Формация или цивилизация?, Народы Азии и Африки, № 3, с. 46-56. Ել.տարբերակը՝ <http://ignorik.ru/docs/l-b-alaev--b-s-erasov-formaciya-ili-civilizaciya-narodi-az.html> (մուտքի օր՝ 29.10.2019):
- Андерсон П.** 2010, Родословная абсолютистского государства, Москва, Изд. дом «Территория будущего», 511 с.
- Аристотель** 1983, Сочинения, т. 4, Москва, «Мысль», 840 с.
- Богомазова Л.Н., Хлудеева Л.С.** 2018, К вопросу о необходимости возобновления дискуссии об «азиатском способе производства», История, политология, социология, философия: теоретические и практические аспекты, с. 5-9.
- Варга Е.** 1965, Очерки по проблемам политэкономии капитализма, Об азиатском способе производства, Москва, Издательство политической литературы, 383 с.
- Васильев Л., Стучевский И.** 1966, Три модели возникновения и эволюции докапиталистических обществ, Вопросы истории, № 6, с. 77-90.
- Васильев Л.**, 1982, Феномен власти-собственности. К проблеме типологии докапиталистических структур, Типы общественных отношений на Востоке в средние века, с. 60-99.
- Васильев Л.** 1988, Что такое «азиатский способ производства»? Народы Азии и Африки, №3, с. 66-75. Ել.տարբերակը՝ <http://ignorik.ru/docs/vasileev-l-s-cto-takoe-aziatskij-sposob-proizvodstva-naro.html> (մուտքի օր՝ 29.10.2019):
- Васильев Л.** 1997, Генеральные очертания исторического процесса (эскиз теоретической конструкции), Философия и общество. Выпуск №1, с. 113-134.  
Ել.տարբերակը՝ <https://www.socionauki.ru/journal/articles/1442523/> (մուտքի օր՝ 29.10.2019):
- Васильев Л.** 2005, История Востока, том I, Москва, «Высшая школа», 512 с.
- Гарушкин Ю.** 1966, Об азиатском способе производства, Вопросы истории, № 2, с. 83-100.

- Галеев К.** 2011, Теория гидравлического государства К. Виттфогеля и ее современная критика, Социологическое обозрение, том X, № 3, с. 155-179.
- Гегель Г. В. Ф.** 1993, Лекции по философии истории, СПб, «Наука», 480 с.
- Герцен А.** 1858, Старый мир и Россия. Письма Искандера к редактору «The English Republic», В. Линтону (1854 г.). Перевод с французского, Лондон. Էլ.տարբերակ՝ <http://gertsen.lit-info.ru/gertsen/public/russie-vieux-monde/russie-vieux-monde-staryj-mir-i-rossiya.htm> (Առւտրի օր 29.10.2019):
- Гобозов И.** 2017, Гегель и философия истории, Философия и общество, Выпуск №4 (85), с. 5-19.
- Годелье М.** 1965, Понятие азиатского способа производства и марксистская схема развития общества, Народы Азии и Африки, № 1, с. 101.
- Годелье М.** 2007, Азиатский способ производства: стимулирующий концепт с ограниченным аналитическим значением. Общество. Среда. Развитие (Terra Humana), (1), с. 3-18.
- Даниленко Г.** 2018, О месте азиатского способа производства в формационной теории исторического процесса, Культура и цивилизация, № 1(7), с. 42-46. Էլ.տարբերակ՝ [https://cyberleninka.ru/article/v/o-meste-aziatskogo-sposoba-proizvodstva-v-formatsionnoy-teorii-istoricheskogo-protressa](https://cyberleninka.ru/article/v/o-meste-aziatskogo-sposoba-proizvodstva-v-formatsionnoy-teorii-istoricheskogo-protsesssa) (Առւտրի օր 29.10.2019):
- Годес М.** 2009, Дискуссия об азиатском способе производства. По докладу Годеса, Москва, «Либроком», 184 с.
- Ерасов Б.** 1998, Общие критерии дихотомного сопоставления социокультурных оснований Запада и Востока, Сравнительное изучение цивилизаций, Хрестоматия, Москва, «Аспект-Пресс», 536 с.
- Завалько Г.** 2012, Об «азиатском» способе производства и не только о нем, Альтернативы, №3, с. 163-173.
- Илюшечкин В.** 1986, Сословно-классовое общество в истории Китая (опыт системно-структурного анализа), Москва, «Наука», 398 с.
- Илюшечкин В.** 1996, Теория стадийного развития общества, Москва, «Восточная литература» РАН, 406 с.
- Ким Г. (отв.ред.)** 1966, Общее и особенное в историческом развитии стран Востока, Материалы дискуссии об общественных формациях на Востоке (Азиатский способ производства), Москва, «Наука», 248 с.

**Ким О.** 2001, Проблема азиатского способа производства в советской историографии. Автореферат диссертации. Ել.տարբերակ՝ <http://cheloveknauka.com/problema-aziatskogo-sposoba-proizvodstva-v-sovetskoy-istoriografii-20-e-gg-nachalo-90-h-gg#ixzz62sMmqI58> (մուտք 29.10.2019):

**Классен Х. Дж. М.** 2007, Проблемы, парадоксы и перспективы эволюционизма, Альтернативные пути к ранней государственности, с. 366-382.

**Кондакова С.** 2014, «Китайский деспотизм»: миф или реальность? Проблемы и перспективы экономики и управления, Материалы III Международной научной конференции, с. 6-11.

**Коротаев А.** 1995, Горы и демократия: к постановке проблемы. Альтернативные пути к ранней государственности, с. 77-93.

**Коротаев А.** 2003, Социальная эволюция: факторы, закономерности, тенденции, Москва, «Восточная литература» РАН, 287 с.

**Кошман В.** 2018, Современные подходы к пониманию государства и его типологий, Современные тенденции развития права в условиях глобализации, с. 369-377.

**Кочакова Н.** 2007, Понятие «раннее государство», Антропология власти. Хрестоматия по политической антропологии, том II, Политическая культура и политические процессы, с. 321-345.

**Крадин Н.** 2000, Кочевники, мир-империи и социальная эволюция, Альтернативные пути к цивилизации, с. 314-336.

**Крих С.** 2015, Образ древности в советской историографии: конструирование и трансформация, Автореферат диссертации. Ել.տարբերակ՝ <http://cheloveknauka.com/obraz-drevnosti-v-sovetskoy-istoriografii> (մուտք 29.10.2019):

**Латов Ю.** 2007, К читателю. Тройной юбилей теории азиатского производства. Историко-экономические исследования, Изд-во Байкальский государственный университет (Иркутск), том VIII, № 2, с. 5-7.

**Лынша В.** 1995, Загадка Энгельса, Альтернативные пути к ранней государственности, с. 36-58.

**Маргарян Е.** 2016, «Деколониальный поворот» в современном историческом сознании. «Что там за поворотом?, «Ex orient lux. Изменение мировоззренческой парадигмы от европоцентризма к универсализму», с. 10-27.

**Маркс К.** 1949, К критике политической экономики, Москва, Госполитиздат, 270 с.

- Маркс К., Энгельс Ф.** 1962, Сочинения, том XXV, ч. II, Москва, Госполитиздат, 551 с. Ել.տարբերակը՝  
<https://www.marxists.org/russkij/marx/cw/t25-2.pdf> (մուտքի օր՝ 29.10.2019):
- Маркс К.** 1980, Экономические рукописи 1857-1861 гг., Москва, Политиздат, 564 с. Ել.տարբերակը՝<http://www.marxism-leninism.narod.ru/Library/Marx/Marx3.htm> (մուտքի օր՝ 29.10.2019):
- Мигаль А.** 2015, Концепт ВОСТОЧНЫЙ ДЕСПОТИЗМ в представлениях французских просветителей о мусульманском Востоке, Научный диалог, № 11(47), с. 150-162.
- Монtesкье Ш.** 1955, Избранные произведения, Москва, Госполитиздат, 803 с.
- Мун А.** 2009, Сущность концепции «восточного общества» К.А.Виттфогеля и ее истоки, Известия Российского государственного педагогического университета им. А. И. Герцена, с. 27-34.
- Мухаев Р.** 2016, История политических и правовых учений (с хрестоматией), учебник для бакалавров, Москва, «Юрайт», 694 с. Ել.տարբերակը՝  
[https://studme.org/56782/politekonomiya/teoriya\\_gosudarstvennogo\\_suvereniteta\\_zhana\\_bodena#806](https://studme.org/56782/politekonomiya/teoriya_gosudarstvennogo_suvereniteta_zhana_bodena#806) (մուտքի օր՝ 29.10.2019)
- Неронова В.** 1992, Проблема формационной принадлежности древнего мира в советской историографии, Античность Европы, с. 111-121.
- Никифоров В.** 1966, Концепция азиатского способа производства и современная советская историография (доклад), Общее и особенное в историческом развитии стран Востока (под ред. Кима Г. Ф.), с. 9-33.
- Никифоров В.** 1970, Советские историки о проблемах Китая, Москва, «Наука», 416 с.
- Никифоров В.** 1977, Восток и всемирная история, Москва, «Наука», 359 с.
- Нуреев Р.** 1979, Проблема «азиатского способа производства» в советской историко-экономической литературе, Вестник Московского университета, серия 6: экономика, № 5, с. 13-22.
- Нуреев Р.** 1993, Азиатский способ производства как экономическая система, в сб. Феномен восточного деспотизма: структура управления и власти, с. 62-87.
- Плеханов Г.** 1956, Избранные философские произведения, том I, Москва, Госполитиздат, 848 с.
- Погосян В.** 2015, Концепция цивилизационных матриц в

макросоциологическом анализе социальных изменений, Вестник Ереванского университета, №3(18), с. 30-44.

**Рожанский И.** 1995, Расизм и древняя Греция, Вопросы истории естествознания и техники, Выпуск №2, с. 58-65. Ելտարբերակը  
[http://vivovoco.astronet.ru/VV/PAPERS/HISTORY/VV\\_HI1\\_W.HTM#1](http://vivovoco.astronet.ru/VV/PAPERS/HISTORY/VV_HI1_W.HTM#1) (մուտքի օր՝ 29.10.2019):

**Рокмор Т.** 2011, Маркс после марксизма, Москва, «Канон+»; «Реабилитация», 411 с.

**Саутхолл Э.** 2000, О возникновении государства, Альтернативные пути к цивилизации, с. 130-136.

**Семенов Ю.** 1998, Маркса теория общественно-экономических формаций и современность, Философия и общество, с. 190-233. Ելտարբերակը [https://scepsis.net/library/id\\_120.html](https://scepsis.net/library/id_120.html) (մուտքի օր՝ 29.10.2019):

**Семенов Ю.** 2003, Философия истории, Общая теория, основные проблемы, идеи и концепции от древности до наших дней, Москва, «Современные тетради», 777 с. Ելտարբերակը  
[https://scepsis.net/library/id\\_1065.html](https://scepsis.net/library/id_1065.html) (մուտքի օր՝ 29.10.2019):

**Семенов Ю.** 2019, Политарный (азиатский) способ производства: сущность и место в истории человечества и России, Москва, Ленанд, 376 с.

**Струве В.** 1934, Очерки социально-экономической истории древнего Востока, Известия Государственной академии истории материальной культуры, Вып. 77.

**Тарасов А.** 1996, Суперэтатизм и социализм, К постановке проблемы, Свободная мысль, № 12. Ելտարբերակը  
[https://scepsis.net/library/id\\_102.html](https://scepsis.net/library/id_102.html) (մուտքի օր՝ 29.10.2019):

**Тер-Акопян Н.** 1965, Развитие взглядов К.Марка и Ф.Энгельса на азиатский способ производства и земледельческую общину, Народы Азии и Африки, № 2, с. 70-87.

**Тер-Акопян Н.** 1973, Маркс и Энгельс об азиатском способе производства и земледельческой общине, Из истории марксизма и международного рабочего движения, с. 167-220.

**Хазанов А.** 2002, Кочевники и внешний мир, Алматы, «Дайк-пресс», 604 с.

**Формозов А.** 2006, Русские археологи в период тоталитаризма. Ելտարբերակը <https://arheologija.ru/formozov-russkie-arheologi-v-period-totalitarizma/> (մուտքի օր՝ 29.10.2019):

**Шубина М.** 2011, Анализ концепции «восточного деспотизма» в западноевропейской философской мысли нового времени, Вопросы теории и практики. № 3(9), ч. III, с. 208-210.

**Энгельс Ф.** 1931, Анти-Дюринг, Маркс К., Энгельс Ф., Сочинения, том 14, Соцэкиз, 359 с. Ել.տարբերակը՝  
<https://www.marxists.org/russkij/marx/1877/anti-duhring.pdf> (մուտքի օր 29.10.2019):

**Bhattacharyya S.** 2013, The Asiatic Mode of Production, Studies in Marxism, Vol.14, pp. 54-65.

**Dunn Stephen P.** 1982, The Fall and Rise of the Asiatic Mode of Production, Routledge & Kegan Paul Ltd, 154 p.

**Krader L.** 1994, Asiatische Produktionsweise, Historisch-kritische Wörterbuch des Marxismus 1, 1994, pp. 628-638.

**Milos J.** 1997, Der Marxsche Begriff der asiatischen Produktionsweise und die theoretische Unmöglichkeit einer Geschichtsphilosophie, Beiträge zur Marx-Engels-Forschung. Neue Folge. pp. 101-113. Ել.տարբերակը՝  
[https://www.academia.edu/12011475/Der\\_Marxsche\\_Begriff\\_der\\_asiatisch\\_en\\_Produktionsweise\\_und\\_die\\_theoretische\\_Unm%C3%B6glichkeit\\_einer\\_Geschichtsphilosophie](https://www.academia.edu/12011475/Der_Marxsche_Begriff_der_asiatisch_en_Produktionsweise_und_die_theoretische_Unm%C3%B6glichkeit_einer_Geschichtsphilosophie) (մուտքի օր՝ 29.10.2019):

**Milos J.** 1999, Asiatic mode of production. Encyclopedia of Political Economy, v.1. Routledge Publishers, London 1999, pp. 18-20.

**O'Leary B.** 1989, The Asiatic mode of production. Oriental despotism, historical materialism and Indian history, B. Blackwell, 394 p.

**Treadgold, Donald W.** 1987, Soviet Historians' Views of the «Asiatic Mode of Production» Acta Slavica Iaponica, 5, pp. 1-20.

**Sahay Gaurang** 2007, Marxism and the Orient: A Reading of Marx, Borderlands e-journal, volume 6, №1. Ել.տարբերակը՝  
[https://www.researchgate.net/publication/263167816\\_Marxism\\_and\\_the\\_Orient\\_A\\_Reading\\_of\\_Marx](https://www.researchgate.net/publication/263167816_Marxism_and_the_Orient_A_Reading_of_Marx) (մուտքի օր 29.10.2019):

**Said Edward W.** 2003, Orientalism - Western Conceptions of the Orient, Penguin Books, 396 p.

**Sofri G.** 1969, Il Modo di Produzione Asiatico. Storia di una controversia marxista. Torino, Einaudi, 193 p.

**Մարիամ Խանզադյան - <<ԳԱԱ արևելագիւղության  
ինսիրիպուլը, Հին Արևելքի բաժին, գիւղաշխալող,  
mkhanzadyan@orient.sci.am**

## EARLY STATE: ASIATIC MODE OF PRODUCTION

**Key words:** *Marxism, Asiatic mode of production, orientalism, oriental despotism, genesis of state, soviet ideology.*

The article discusses a theory of Asiatic mode of production. This theory had a great influence on the development of historiographic and sociological science thoughts of the 19<sup>th</sup>-20<sup>th</sup> centuries. The theory of Asiatic mode of production proposed by Marx in the Soviet years was under ideological and political pressure, and its discussion was interrupted twice - in the 1930s and 1960s. Nevertheless, indirect developments of this theory had a great influence on the development of Oriental studies in the USSR. Many points of Marxian theory are now outdated, but still it is being discussed both in the post-Soviet space and in Western science.

**Mariam Khanzadyan** - *Institute of Oriental Studies NAS RA,  
Department of Ancient Orient, Researcher,  
mkhanzadyan@orient.sci.am*